

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1951 ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ ԹԻՒ 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հ. Մ. Ճ. - Ազգային փառապանք. վարդանանց 1500-ամեակը 1

ԳՐԱԿԱՆ

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. - Արեւելահայ հրապարակա- գրութիւն 6

Հ. ԵՓԲԵՄ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ. - Իզմեր - Թունահոս ժպիտներ 16

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ. - Հայ զրաշարին 17

Յ. Գ. - ՏԵԿ. Զարուհի Գալէմքիարեանի հետ 30

Հ. Մ. Ճ. - Առանձնութիւն 36

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ. - Խորհուրդ 37

ԳԵԻ. - Գէպի օտարութիւն 48

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՅԵՐ. Պ. ՄԻՍԱԿԵԱՆ. - Քանի մը դիտողութիւն- ներ Պրոֆ. Ս. Մալխասեանցի լոյս ըն- ծայած «Օգուտ բժշկութեան» զրքին մասին 9

Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՅԱԹԵԱՆ. - Ս. Աստուածածնի վերաբնութեան Հայոց քով 18

Հ. Մ. Ճ. - Մահ արեւելագէտ և ծիսագէտ Մաքս Իշխանին Սաքսոնիոյ 38

Prof. Marc-Antoine van den Oudenrijn O. P. - Notes sur quelques ouvrages armé- niens de provenance Dominicaine 40

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ. - Գծանկարիչ Վանօ Խոջաբե- գեան 26

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

ԽՄԲ. - † Հանգիստ հոգւոյ Արշի. Գրիգոր Եպիս- կոպոս Պատաւարականի 44

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԽՄԲ. - Ժողովրդական Արձագանգ 1950-ի «Գե- դունի»-ին հրատարակութեան տարին 45

SOMMAIRE

1951 Janvier - Février N. 1-2

ARTICLE DE FOND

P. M. Dj. - La solennelle fête Nationale: Le 1500^{me} anniversaire des héros Vartaniens 1

LITTÉRATURE

P. M. Djanachian. - Le journalisme armé- nien 6

P. E. Der Ghazarian. - Desirs - Sourires venimeux 16

Marie Atmadjian. - Au compositeur armé- nien 17

J. K. - M^{me} Zarouhi Kalemkarian 30

P. M. Dj. - Solitude 36

Arsène Yerghat. - Mystère 37

Dev. - Vers les rivages inconnus 48

PHILOLOGIE

Dr. B. Missakian. - Quelques observations sur les « Avantages de la Médecine », publié par le Prof. S. Malkhassian 9

P. Jean Khayath. - L'assomption de la Sainte Vierge chez les arméniens 18

P. M. Dj. - † La mort du Prince Max de Saxe, orientaliste et liturgiste 38

Prof. Marc-Antoine van den Oudenrijn O. P. - Notes sur quelques ouvrages armé- niens de provenance Dominicaine 40

BEAUX-ARTS

Aram Yérémiian. - Le dessinateur Vano Khodjabekian 26

NECROLOGIE

Réd. - † Mort de mgr. l'Évêque Gregoire Bahabanian, à Paris 44

DIVERS

Réd. - Echo populaire sur l'édition de « Kaghouni » de 1950 45

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1951
109-րդ ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ
ԹԻՒ 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ 1500-ամեակը

ԱՅՆ Է հորիզոնը 1951 տարւոյն, ոչ քանակապէս եւր: Թերեւս մարդկութեան կեանքին ամենէն տխուր մէկ շրջանն է ներկայ վիճակը՝ ա- ղետալի պատերազմներու, տիեզե- րաւաւան արհաւիրքներու ահաւոր մղձաւանջով մը տառապող: Մարդ- կային քաղաքակրթութիւնն ու մարդ- կային ինքնակործանում, զոյգ նժար- ներ ձակառագրական, որոնց վրայ միտքն ու գիտակցութիւնը մարդերու՝ կը կերտէ, կը բարձրանայ, կը պար- տոշի ու կը ցածնայ: Այս է դժբախտ կացութիւնը մեր դարուն, ոչ քան կ'ա- պրիկք, ակամատեւ ահաւոր յեղաշր- ջումներու: յեղաշրջումներ գաղափա- րականի՝ գաղափարախօսական դրոշ-

քիւններու զանազան բանաձեւերու տակ, յեղաշրջումներ ազնուական ձկնորումներու և միանգամայն մեքե- նական վիթխարի կազմակերպութիւն- ներու՝ որոնց ետին անմեկնելի հա- կատարութիւններ կեանք կ'առնեն և կը մեռնին ամեն օր, ցնցելով հսկայ զան- գոշածր մարդկային բազմութիւններու, ցրոշած աշխարհիս չորս ծագերուն:

Քաղաքականօրէն տարրաւ այս տարւոյն կը գոչադիպի, մեզ հայերուս համար գերազանցօրէն հոգեգրաւիչ, 1500-ամեակը վարդանանց յիշատա- կին: Միջազգային պատմութեան մէջ գոչէ իր նմանը չունեցող դիզագնա- կան մէկ դրոշագն է փոքրիկ, բայց ազնուական ու չերժօրէն կրօնաւեր

ԲԱԶՄԱՎԷՊ

ժողովուրդի մը, որ Ե. դարուն մեղեց
սրբազան պատերազմ մը իր կեան-
քին, և իր հաշտութիւն թշնամիին դէմ:
« Սոքր քո և պարսկացի մեր », ան-
վեհեր դիմադրութեան բանաձեռն,
միաբերան բարձրացած ժողովուրդի
մը՝ որ յառաջ իր հոգիին, իր մարտը
բարքերուն, մանաւանդ իր եկեղեցիին
սրբութիւններուն, կը հռչակէր ինք-
զինքը պատրաստ նահատակութեան,
ի սէր իր հայրենիքին: Տղմուտի ա-
փերուն վրայ Յոնիս 1-ի գիշերը
451-ին, աստեղագարդ երկնքի մը
աստուածաւիտէն ճշդներուն տակ,
հայկական բանակը զինուած կրօնա-
կան պատրաստութիւններով, կը սպա-
սէր սրբազան մարտի փողին: Հոն
Վարդան վրանէ վրան կ'անցնէր քա-
ջալերելու, կազմակերպելու: Դեռնոյ
իր ձարտասան լեզունով զինեալներուն
հոգեկան կորովը կ'ամրացնէր և կը
միացնէր զամենքը հասարակաց վը-
տանգին դէմ: Անոնք՝ գոյգ դէմքեր
դիզգազնութեան, և սրբութեան գոյգ
բազմակերպ ազգային դիմադրութեան
ոճին, վառած էին ամեն գնով վանելու
պարսկական սպառնալիքը:

Ազգ մը որ ամբողջապէս ոտքի
կանգնած է իր գոյութեան դրօշը ձեռքը,
և սրտին մէջ կրելով նախանձը աս-
տուածային սրբութիւններուն, արժա-
նի է ստուգիչ միջազգային սրանչա-
ցունի: Մեր Աւարայրը, իր կրօնական
հանգամանքին վեհութեամբը գերա-
զանց է քան Մարաթոնի և Մադամի-
նայի ձակառաւարտները, որոնց կը
հրամայէր լոկ խանդավառ հայրենա-
սիրութիւն մը:

Տիգրանի արքունիքը և Հայաստան
հակընդդէմ պայքարներով չարհուս-
էին յաճախ անցեալին մէջ, տակայն
Ե. դարուն հայերը Յագկերտին աչքին
մեծագոյն սպառնալիք մ'էին ոչ թէ
քաղաքական հզօրագոյն կազմակեր-
պութեան մը ազդած երկիւղով, որքան
իր ազգային գոյնին համար, որ Մե-
րուպեան հրաշագործ գիշտովը հաս-
տատուած, օժտուած սեփական գրե-
քով, սեփական գրականութեան մը
տուած ամբակուռ ինքնապաշտպա-
նութեամբը սպառնալիքուն՝ աննշա-
ձելի գործքիւն մը կը ներկայացնէր
Տիգրանի ճրագիրներուն առջեւ՝ որ կը
ձկտէր պարսկացիներու արեւելեան ժո-
ղովուրդները: Արշակունեան հարա-
տութեան դէմ Երանի արքաներուն
բռնած դաշաձան ընթացքը, խորոս-
կուած էր այսպէս Մերուպի գեղքին
առջեւ, և անկէ անբաժան՝ կրօնական
շունչին տեղեւած անխորտակելի պա-
րիսպներուն դիմաց: Վերանորո-
գուած էր հայոց բազաւորութիւնը,
գրական բազաւորութիւնը, աշխիւ ա-
մուր քան արքունի մակաւնով կառա-
վարուածը: Աւարայրի պատերազմը,
քաղաքական աշխիւ կրօնական հան-
գամանք ունէր հետեւաբար Յագկեր-
տին առջեւ: Հայ կղերական ու աշ-
խարհական դասերը, համաձայն մըտ-
քով և կամքով, կանգնած պարսկա-
կան բանակներուն դիմաց, տոչին ա-
պացոյցը իրենց հաշտութիւն ամբո-
րեան: Զինուած էին անոնք Աստուծոյ
անունով, և եկեղեցիի նախանձով:
Վարդան բազաւորաւիայէ վեհո-
րեամբ իր անձին և հոգոյն, վայե-

լած վստահութեամբը, և իր զինուո-
րական հանձարով՝ կարող էր բնաջինջ
ընել Երանի բոլոր զօրութիւնը, եթէ
ներքին բաժանում մը իր բանակին՝
կեղծաւոր ու մատնիչ Վասակին յա-
ւերժապէս այսպանելի արարքով՝ կէտը
իր ուժերուն չ'անջատուէր իրմէ, անցը-
նելով թշնամիին կողմը: Արդէն ան-
հաշտար ուժեր էին դէմ դիմաց ձա-
կաւած բանակները թռնով և կազմա-
կերպութեամբ, տակայն և այնպէս
Վարդան իր բազմական հնարագի-
տութեամբ և իր խոշորին ձշմարիտ
հայրենասիրութեամբը գերազանց էր
անպայման: Յագկերտ իսկ գիտակից
ստոր՝ կը վախճար Վարդանի ճրագի-
րներէն և պատերազմական շարժում-
ներէն, մանաւանդ անոր ջերմ ազգա-
սիրութեան: Վարդանի մահը ոչ միայն
ազգը, այլ նաեւ Յագկերտ ողբաց-
իկաւ Վարդան, ինկան իրեն հետ
հայ դիզագոյնները, Դեռնոյ և եկե-
ղեցական դասը կրեցին ամենադառն
տանջանքներ, մատնուեցան արտ-
րանքի և մարտիրոսութեան, բայց
անոնց հերոսական դիմադրութեան
շնորհիւ մնացին միշտ կանգուն՝ Հայ-
րենիքն ու Եկեղեցին:

* * *

451-ին Արեւելքը յոգնուած էր կրօ-
նական հարցով մը, որ աշխիւ միջազ-
գային բնոյթ ունէր: Քաղկեդոնի Ս. Ժողո-
վին գոշմարտը, և արեւմտեան
ու արեւելեան եկեղեցիներու համա-
գամայն մասնակցութիւնը՝ ձախտե-
լու համար Եւտիքիսի աղանդին դէմ:
Քրիստոսի երկու բնութիւններու -

մարդկային և աստուածային՝ միացած
իր աստուածային միակ անձին մէջ,
- վարդապետութիւնը Ս. Ժողովի
Հայրերուն պաշտօնական յայտարա-
րութեամբ հաստատուած ու վառուած,
կը խաղաղէր արեւելքի մէջ յարու-
ցուած վեճերը: Այդ թուականին Հայ
Նոնիապետութիւնը, Հայ Նախարա-
րութիւնը ամբողջապէս բռնուած ներ-
քին ամենակեանքով ու կենսական
խնդիրներով, մնացին անտեղեակ եղե-
րութեան: Ոչ կարողիկոսը, ոչ ալ իր
մէկ ներկայացուցիչը կրցաւ երբաւ,
գրաւէր արդէ մը այդ փառաւոր նիս-
տին մէջ՝ արեւելքի և արեւմուտքի
հայրապետներու շարքին, ինչպէս
325-ին Նիկիոյ Ս. Ժողովին՝ Լուսա-
ւորչի գաւազնը՝ Ս. Արիստակէս, հայ
եկեղեցին կը ներկայացնէր: Բացա-
կայութիւն մը որ արդարաւանջի է ան-
շուշտ, նկատուած այդ ժամանակներու
տիւնը պարագաները: Յաշային ա-
կայն, յետ ժողովի մերիկներէն ոմանց
բռնած ընդդիմական դիրքն Է հիմ-
նուելով ի լրոյ առնուած սխալ տե-
ղեկութեանց վրայ: Հայկական եկեղե-
ցին ոչ մէկ կերպով ընդդիմանալու
պատճառ ունէր այդ ժողովի որոշ-
ութեանց, քանի որ արդէն, ունէր
Քրիստոսի երկու բնութեանց վարդա-
պետութիւնը՝ ձիւտ այն ձեռով՝ ինչպէս
ոչուցած էին Քաղկեդոնի Ս. Ժողո-
վին հայրապետները: Մեր շարական-
ները, մեր Ս. Հայրերուն գրուածք-
ները Ե. դարէն առաջ և վերջը, մա-
նաւանդ Ս. Յովնան Օմեցիի հրա-
շայի ձառը « Ընդդէմ երեւոյթակա-
նաց » ոչ միայն կը պարունակէ նոյն



այդ վարդապետութիւնը, այլ նոյնիսկ աստուածաբանական սքանչելի փաստարկութեամբ կը պայքարի զայն ժխտողներուն դէմ, և այսպէս կը ծառայէ իբր վկայութիւն և ապացոյց՝ յաջորդ դարերուն Քաղկեդոնեան հարցին մէջ յարոցումս դժուարութիւններուն դիմաց։ Անոնք կը ներկայացնեն այսօր հայ եկեղեցւոյ դասնաբանական ուղիղ գիծը, երբ ոչ ընդհանուր, գէթ մասնակի յայտնուած գրողներուն և մտածողներուն ողջամիտ զանգումս մը քով։ Այսօր այլեւս ոչ ոք կը վիճէ Քաղկեդոնեան հարցին շուրջ։ անքիւն եւ կատարուած ոչնչմանս իրողութիւնները Հայ եկեղեցւոյ բռնման դիրքին, նկատմամբ «Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ» բանաձեռնին ուղիղ ըմբռնումին, բնութիւնը հասկընալով իբրեւ *անձ* (ἄνθρωπος)։

Քաղկեդոնի Ս. Ժողովին հազարհինգհարիւրամեակը, գոգադիպած վարդանանց անմահ յիշատակին, պարգապէս պատմական իրողութեան մը անդրադարձումն է, առանց որ և է կապ ունենալու վարդանանց փառատօնին հետ, սակայն անկարելի էր առանց նկատողութեան անցնիլ՝ եկեղեցական մարզին մէջ իւրաքանչիւր բնական մը բացոյց այդ անկիւնադարձին շուրջ։

Զմայելի երեւոյթ մ'է արդարեւ նկատելը ընդ թէ 1500 տարի վերջ հայր կ'ապրի և կը տօնախմբէ փառահեղ անցեալ մը իր պատմութեան դիզագնական մէկ շրջանին։ Թե՛ն է

սակայն մեր ներկան, և ո՛ր կը յանգի վախճանը մեր այս վայրափառին կեանքին, բաժնուած իրարմէ զանազան գաղափարներուն մէջ, օտարին ծոցը, որուն լեզուն, որուն քաղաքակրթութիւնը հրապուրիչ և ընկրողիչ, յաճախ կը դառնան մեր ցեղային ինքնութեան գոյնի պահպանումին։ Ներկան տիւր է, ոչ ապագան մշայ։ Երրորդ միջագոյնի պատեւրագով մը ոչ հեռաւոր ահագնագրդեւ աւելի կը տագնապէ մեր կացութիւնը։ Պայծառ և յստակ եւ մեր ազգային ձկնորսները, բայց ամպոտ է հորիզոնը։ Հարկ է սակայն ձկնորսը միշտ կեդրոնացումի մեր ուժերուն, ձկնորսը համերաշխութեան, հասնելու համար միեւնոյն հանրային նպատակին, որ փափաքն է բոլորիս, և գերագոյն տեսլականը։

Հայ ժողովուրդը, ոգեկոչւումով փառապանք օրերուն այս յաղթանակին, իր կեանքին ոչ ազգային գոյութեան նոր ներարկում մ'է որ կը ստանայ ստուգիւ։ Ծանօթ է ամենուս որ ներկայիս մեր ազգային մեծագոյն աղէտը, ձոշուռի ամենէն վտանգաւոր սարսնաշիթն է։ Ամեն օր որ կ'անցնի, Երուսա թէ Սմերիկա ապաստանած հայութեան կարիք մը արիւն է որ կը պակսի, ոչ մէկ կ'աշխատի իշխանութեան օտարին քաղաքակրթութեան բարիքները՝ առանց ազգայնացնելու զանոնք, օտարին լեզուն փոխանցումս տարրեր առնելով մեր լեզուն մէջ, և ախորժելով ապրիլ արեւմտեան կենցաղին շրջանցիլ դիշխանին տակ։ Վարդանանց 1500-ամեակը պիտի

ըլլայ փառատօն մը իսկապէս այն տուն, երբ մեր ազգային Միութիւնները, պատասխանատու Մարմինները աշխիւն օգտուին աւելի գիտակցօրէն կազմակերպելու պայմանները մեր ազգային գոյութեան՝ օտար ափերուն վրայ։ Այսօր կրօնական հարցէն վերջ, ազգային լեզուի պահպանման պայքարն է որ դարձած է մտահոգիչ ամեն տեսլանով։ Անցած եւ ժամանակները, երբ հայը պաշարուած կրօնապէս այլադասան զանգումներէ, և կամ մահմետական աղանդաւորութեան չարատանջ հարստանքներուն մէջ, պարտաւոր էր ամուր կաշկերու իր յոյս հաւատքին, իր եկեղեցիին՝ որոնցմով կ'ապահովէր միանգամայն իր ազգային գոյնը, իր ցեղային ինքնութիւնը։ Երուսաղիմ և Սմերիկայի

մէջ ապրող հայութիւնը այսօր հեռուն է այդ փառատօնէ։ Հայրենական լեզուն, միայն լեզուն, հասարակաց բոլոր յաւանուանութիւններուն համար, պիտի ըլլայ միակ խարիսխը, որուն փարած պիտի փրկուի աշխարհուն։ Եկեղեցիէն դուրս, մեր ընտանիքներուն յարկին տակ, մեր դպրոցներուն սեւեռէն ներս, փողոցներուն և կամ հաւաքոյթներուն մէջ, հայերէն լեզուն պէտք է ըլլայ հետեւաբար մեր ազգային միակ դրօշը, որուն ներքեւ համախմբուելով կարելի պիտի ըլլայ մեզի շարունակել մեր սրբազան պայքարը, ոչ թէ այլեւս պարսկական փառանքներուն, այլ յարաւրի ապրող և հոգեպէս մեզ բռնաւորող բազմահազար բնամիներուն դէմ։

ԽՄԲԱԳՈՒԹԻՒՆ

